

ԱՐՄԵՆԱԿ ԵԶԵԿԻ ՔՈՉԱՐՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակին)
(1913 – 1986)



Լրացավ Հայաստանի երկրաբանական ծառայության ճանաչված գործիչներից մեկի, Հայաստանի վաստակավոր երկրաբան, 1967-1971թթ. ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ ԱՐՄԵՆԱԿ ԵԶԵԿԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ծննդյան 100-ամյակը:

Ա.Քոչարյանը ծնվել է 1913թ. հոկտեմբերի 15-ին Լոռու, Հ.Թումանյանի հայրենի Դսեղ գյուղում: Դպրոցն ավարտելով ուսումնառությունը շարունակել է Թիֆլիսի Անդրկովկասյան երկրաբանական-հետախուզական տեխնիկումում, որը գերագանց ավարտելուց հետո, աշխատել է Վրաստանի Ճիաթուրի մանգանի հանքավայրում որպես տեխնիկ-հետախույզ:

1935-1940թթ. Ա.Քոչարյանը սովորել է Երևանի պետական համալսարանի նորաբաց երկրաբանական ֆակուլտետում, որն ավարտելով 1940-1945թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես գիտական աշխատող: Զբաղվել է բազմակողմանի երկրաբանական հետազոտություններով Ղափանի պղինձ-հրաքարային հանքային դաշտի սահմաններում: Աշխատանքների արդյունքներ ամփոփվել և ներկայացվել են որպես ատենախոսություն, որի համար 1945թ. նրան շնորհվել է երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեքնաճուրի աստիճան:

1970թ. Ա.Քոչարյանը Մոսկվայում հաջողությամբ պաշտպանում է դոկտորական ատենախոսություն, նվիրված Հանրապետության տարածքում հազվագյուտ տարրերի տեղաբաշխման օրինաչափությունների բացահայտման:

1945-1947թթ. Ա.Քոչարյանը աշխատում է ԽՍՀՄ Գունավոր մետալուրգիայի նախարարության «Արմցվետմետոագվեդկա» կազմակերպության արտադրա-տեխնիկական բաժնի պետի պաշտոնում:

1950-1961թթ. Ա.Քոչարյանը աշխատանքի է անցնում ԽՍՀՄ Երկրաբանության մինիստրության մասնագիտացված “Գրոմովյան” արշավախմբի գլխավոր երկրաբանի ապա գլխավոր ինժեների և արշավախմբի պետի տեղակալի պաշտոններում: Նրա անմի-

ջական ղեկավարությամբ ու մասնակցությամբ իրականացվում են լայնածավալ աշխատանքներ Հայաստանի տարացքում հազվագյուտ գլխավորապես ուրանի հանքային հումքի կուտակումների որոնման և հետախուզման, ինչպես նաև դրանց օգտագործման հեռանկարների որոշման ուղղությամբ:

1961-ից մինչև իր վախճանը (1986թ., հուլիսի 30-ին) Ա.Քոչարյանը կրկին աշխատում էր ՀՀ ԳԱԱ ԵԳԻ-ում՝ սկզբում գիտության գծով փոխտնօրենի, իսկ 1967-1971թթ. տնօրենի պաշտոններում:

Ա.Քոչարյանը երկարամյա գիտական աշխատանքներին բնորոշ էին հետազոտությունների լայն շրջանակ, մեծ պատասխանատվություն և նվիրվածություն: Նա զբաղվել է Հայաստանի տարբեր մետաղական և ոչ մետաղական հանքային հումքի տեսակների (պղինձ, մանգան, շինանյութեր, ապակու հումք, բնական ներկանյութեր և այլն) ուսումնասիրության և դրանց օգտագործման հեռանկարների հարցերով: Ա.Քոչարյանի հետազոտությունների կարևոր մաս են կազմել հատկապես հանրապետության տարացքում հազվագյուտ տարրերի տարածման, տեղաբաշխման և կուտակման օրինաչափությունների բացահայտման, ինչպես նաև դրանց հանքավայրերի և երևակումների առաջացման և գնահատման գիտական վերծրության և հնարավոր կիրառման առնչվող հարցեր:

Գիտահետազոտական աշխատանքին զուգընթաց, Ա. Քոչարյանը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ: Շուրջ երկու տասնամյակ նա Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում դասավանդել է օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանություն առարկան:

Անվանի երկրաբանը 40-ից ավելի տպագիր աշխատությունների և շուրջ 200 հաշվետվությունների, գրախոսականների, ինչպես նաև բազում գիտահանրամատչելի հրատարակումների հեղինակ է: Զգալի են Ա.Քոչարյանի ծառայությունները նաև երկրաբանական գիտության պատմության բնագավառներում: Նա եղել է “Հայաստանի երկրաբանական ուսումնասիրվածություն” բազմահատորյակի գլխավոր խմբագիրը, զբաղվել է խմբագրական գործունեությամբ, ինչպես նաև մայրենի լեզվով մասնագիտական տերմիններ մշակմամբ, բազմիցս հանդես եկել երկրաբանական տարբեր հարցերին նվիրված զեկուցումներով ու հոդվածներով:

Ա.Քոչարյանի բազմամյա գործունեության զգալի հատվածը, հատկապես Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրենի և փոխտնօրենի պաշտոնավարման տարիներին, նվիրված է եղել նաև գիտակազմակերպական աշխատանքներին: Նա տարիներ շարունակ հանդիսացել է “Հայկական հանրագիտարանի” երկրաբանական սեկցիայի, “Հայաստանի բնություն”, ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրությունների անդամ:

Հանրապետության ընդերքի ուսումնասիրման և մասնագիտական երիտասարդ կադրերի պատրաստման գործում ցուցաբերած

երկարամյա, մեծ ավանդի համար Ա.Քոչարյանը պարգևատրվել է մի շարք Կառավարական պարգևներով և ՀՄԽՀ Գերագույն խորհրդի Պատվոգրով, նրան շնորհվել է «Հայաստանի վաստակավոր երկրաբան» պատվավոր կոչումը:

Ա.Քոչարյանի՝ Հայաստանի երկրաբանական ծառայության վաստակաշատ, ճանաչված գործիչի, նվիրյալ քաղաքացու, Մեծ Լոռեցու՝ Հովհանես Թումանյանի գերդաստանի ներկայացուցիչներից մեկի, և միեվնույն ժամանակ արտակարգ համեստ, պարկեշտ, ընտանիքին նվիրված անձնավորության կերպարը միշտ վառ կմնա բոլոր նրան ճանաչողների հիշողության մեջ:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանության գիտությունների ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն